ԵՂԻՇԵԻ ՃԱՌԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ

Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

Եղիշեն այն հեղինակներից է, որի մատենագրությունը ուսումնասիրվել ու արժևորվել է համակողմանիորեն։ Այս մասին են վկայում Եղիշեի վերաբերյալ այն ուսումնասիրությունները, որ գոյացել են վերջին հարյուրամյակի ընթացքում։ Դրանց մեջ պատվավոր տեղ են գրավում մանավանդ աղբյուրագիտական ուսումնասիրությունները, որոնցում բծախնդիր կերպով վեր են հանված Եղիշեի աղբյուրները։ Հասկանալի է, որ այդ ուղղությամբ կատարված ամեն մի լրացուցիչ հետազոտություն կարող է իր ոչ անկարևոր նպաստը բերել Եղիշեի մատենագրական վաստակի առավել առարկայական գնահատման մարզում։ Այդ նպատակին է հետամուտ այս հոդվածը։

Հանրահայտ է Փիլոն Եբրայեցու ազդեցությունը հայ (և ոչ միայն հայ) մատենագրության վրա։ Մի շարք ուսումնասիրություններից գիտենք, որ այդ ազդեցությունից անմասն չի մնացել նաև Եղիշեն[1]։ Այդ ուղղությամբ իրագործված ուսումնասիրությունը երևան է հանում ազդեցության նորանոր հետքեր, որոնք ընդլայնում են մեր գիտելիքը Փիլոն—Եղիշե կապի մասին։ Ընդհանրապես մեկնության մեջ Փիլոնը, խոսելով մարդու բարի և չար բնույթի մասին, նշում է, որ նա հողեղեն է և այդու՝ ենթակա կենդանական ստորին բնազդների։ Բնազդներ, որոնց իշխանության տակ մարդը (սեփական թողտվությամբ) բարոյապես մեռնում է՝ վերածվելով կենդանի դիակի։ Այս պատկերն է ընկած Եղիշեի «Խրատ յաղագս միանձանց» և «Մեկնութիւն Յեսուայ և Դատաւորաց» երկերի համապատասխան տեղիների հիմքում.

Փիլոն	Եղիշե
«...Գինեղինութեամբք և խահակերութեամբք և մատակխաղութեամբք և միանգամայն գիշով և հոսանուտ վարուք պիտեցեալք, դիակիր եմք մարմնովս...» (93)։	«Կենդանեաւ մերով տեսանք զդիակուն անձանց մերոց...»[2] (163—164)։ «Շինուածք մեր եղեն գերեզմանք դիականց մերոց...» (161)։ «Մարդիկ կենդանի մեռեալ դիականց նմանելիք, հոտ մահու հարկանէր ամենեցունց...» (183)։

Անկանոն կենցաղավարության հետևանք է մարմնի և հոգու անկանոն զարգացումը. Փիլոնի այս դատողության որոշակի աղդեցությամբ է շարադրվել Եղիշեի «Ցերեւումն Տեառն առ Տիրերեայ ծովուն» ճառի այն հատվածը, ուր նախաքրիստոնեական կենցաղավարությունը նմանեցվում է ծովի ցրերում բնակվող կենդանիների բարբարոս կենցաղավարությանը.

---

1 Տե՛ս Փիլոնի Եբրայեցւոյ մնացորդք ի Հայս, որ են մեկնութիւն Սննդոց և Ելից..., աշխատ. Հ. Մ. Ավգերյանի. Վենետիկ, 1826 (=Փիլոն), էջ 204, 237, 455, 460, 597· Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի. Ա, Վենետիկ, 1836 (=ՆԲՀ), էջ 20։ Գ. Զտրրհանալյան. Մատենագարան հայկական թարգմանությանց նախնյաց (դար Դ—ԺԳ). Վենետիկ, 1839, էջ 745—747։ Բ. Կյուլլեսերյան. Եղիշե։ Քննական ուսումնասիրություն.—«Հանդես ամսօրյա». 1906, էջ 149—152։ Ս. Խաչատյան. Փիլոն Եբրայեցի և Եղիշե.—«Բիւրակն», նոր շրջան, ԺԷ տարի, 1895, էջ 790—791։ Լ. Խալիկյան. Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» աշխատությունը. Երևան, 1945 (անտիպ), էջ 109—120։

2 Շարադրանքի ընթացքում բերված այս և հետագա էջահամարները հեանյալ հրատարակությանն են. Եղիշէի մատենագրութիւնք. Վենետիկ, 1859։

Փիլոն	Եղիշե
«Անվար կենաց խառնաւար է մարմին...»[3]	«Յառաջ քան զգալուստն Տեառն ցամաքայինքս շրայնոց նմանեցան անիշխան և անառաջնորդ, խառնաւար կենաւք զմիմեանս զրկելով և կորուսանելով առանց խղճելոյ...» (333)։

Փիլոնի ազդեցությունն ակնհայտ է առավելապես թվերի խորհրդարանական մեկնություններում։ Այդ մասին են վկայում ներքոբերյալ զուգադրումների մեջ առկա իմաստային նույնությունն ու բառացի համընկնումը.

Փիլոն	Եղիշե
«Վասն որոյ Հոմերոս ոչ վայրապար ասէ, թէ երեքկին ամենայն ինչ բաժանեալ է...» (250)։	«Ամենայն ինչ, ասեն, որ երեքկին է, բաժանելի է...» (334)։
«Ի բնութեան, արդարև, մաքուր է եօթներեակ թիւն, իբրու զի կոյս է և անխառն և անմայր, ոչ ծնանի և ոչ ծնեալ լինի... քանզի անեղ է և անծին, և ոչ ինչ ի նմանէ ծնանի, և զի թէպէտ և լինելութեան, և ծննդոց սկսանաւ է, քանզի շարժէ զամենայնին զարութիւնս, որ բնաւորեցան բարիոք առ ի լինելութեան ծննդոց...» (91)։	«Եւ եօթն թիւդ բերէ զնմանութիւն անծնի և անծինն՝ անեղի, և անեղն ունի զարարչական զօրութիւն...» (324)։
«Եօթն աւուրց թիւ... յիշատակ է աշխարհիս լինելութեան, որոյ ծննդականն տոն արարեալ լինի եօթներակն, յայտնապէս ցուցանելով զհօրն, իբրու թէ՝ ես եմ և աշխարհի արարիչ...» (94—95)։	
«Ամենակատարութիւն տասներեակ թուոյն ամենայարմարագոյն է և չափ անբաւութեան թուոց ըստ որում կարզեալ է և յօրինեալ աշխարհս...» (189)։	«Զի տասնեակն ունի զկատարումն թուականին և թուականն՝ զնիւթական գոյութիւն աշխարհիս...» (244)։

Հետևելով աստվածաբանության մեջ հայտնի խորհրդաբանական մեկնությանը՝ «Ի խաչելութիւն Քրիստոսի» ճառում Եղիշեն զուգահեռ է անցկացնում Մովսես մարգարեի բարձրացրած պղնձե օձի և փրկչական խաչի միջև։ Այդ երկու իրակությունները փոխադարձաբար խորհրդանշում են մեկը մյուսը։ Եթե պղնձե օձը Քրիստոսի խաչի հինկտակարանային, ապա Քրիստոսի խաչը պղնձե օձի նորկտակարանային խորհրդանիշն է։ Ինչպես կենդանիներից անարգվածը՝ օձը բարձրացվեց փայտի վրա, այնպես էլ մարդկանցից անարգվածը՝ Քրիստոսը, բարձրացվեց խաչի վրա՝ խաչին գամելով մարդու մեղքերը, ցանկասիրությունը, որոնց խորհրդանիշը օձն է։ Սողունի բնույթը բացատրելիս Եղիշեն առաջնորդվում է Փիլոնի Ծննդոց մեկնության տվյալներով.

Փիլոն	Եղիշե
«Դէպ է ճշմարիտ ասել, եթէ իմաստնագոյն արդարև քան զամենայն գաղանս լինել օձին։ Բայց ինձ թուի, թէ և վասն առ յախտն ակնարկու-	«Քանզի ոչ ինչ այլ գոյ նման ցանկութեան, որպէս զօձի բնութիւն խորագետ և նենգաւոր, սողի և սպրդի մաւանել ընդ նեղ և ընդ նուրբ փա-

[3] ՆԲՀ, Ա, էջ 927։

թեան, որոյ նշանակ է և ախտն՝ հեշտ ցանկութիւն սփի, զանզի խորամանկագոյնք են ցանկառերքն...» (22)։
«...Բայանան ւոքս ընդ հողով և որջքն իւրեանց են ի սորս և ի սոյզս երկրի...» (25)։
«...Զգայութիւն ի ստորակայէն և զգազգազն խարի և պատրի. իսկ իմաստնոյն զգայութիւնք անխարք են» (31)։
«Օձ նշանակ ցանկութեան է» (31)։
«...Վասն զի նշանակ ցանկութեան է օձն և ձեվացուցանէ զցանկասերն...» (31)։

պարս, մտանէ և ցուցանէ զգործ զառնութեան մահուն. որպէս իգական ցանկութիւն հեղու և ապակի և տենչանս կերակրոց. շարժի և շըռայլի յարբեցութիւն անյագութեան. ուստի բազմագլուխ զազան ցանկութիւնն զօրանայ ի վերայ զգայութեանցն մարդոյն և անյագ վարէ յիրս աղտեղիս։ Դարձեալ և ձեւ սողնոյս այսորիկ շարժման ճշմարտապէս ցուցանէ զշարժումնս մերոյ բնութեանս, որպէս և ուսաք իսկ ի բնական արանց, որ անստութեամբ տան նախանութիւն իմաստասէր մարդոց» (250)։

Փիլոնի հետ միասին Եղիշեի վրա իր նշմարելի ազդեցությունն է թողել Հովհան Ոսկեբերանը[4]։ Փիլոնի Ծննդոց մեկնության և Ոսկեբերանի Մատթեի ավետարանի ու Պողոսի թղթոց մեկնության ընդհանուր ազդեցության հետքերը կարելի է նկատել Եղիշեի «Բան խրատու յաղագս միանձանց» երկի վրա։ Ինչպես Փիլոնն ու Ոսկեբերանը, այնպես էլ Եղիշեն հոգևոր սխրանքը գովաբանելիս այն նմանեցնում են ըմբշամարտությանը.

Փիլոն	Ոսկեբերան	Եղիշե
«Այսպիսի իմն ունի բան և ըմբշացն մրցումն և գուպարք, և քանզի և սոցա պատրանք և խաբեութիւն համարեալ է պատուական և որ խաբեութեամբ հերքեն հակառակացն, մրցանակաց և պըսակաց արժանի լինին, ապա ուրեմն... գովութիւն յանգէտակատար այնմ, որ արուեստին և ոչ առանց արուեստի գործէ առաքինինն» (426—427)։	«Ո՞ ոք նահատակ, որ ի հանդիսի չդիտիցէ անցանել, և յորժամ ըմբշամարտ մրցութիւնքն կոչիցեն յառաքինութիւն, և քաջութեան ախոյեան կարիցէ ցուցանել»[5]։ «...Պատերազմ կալայք յանձինս, որ նահատակութիւնք են և ոչ զարդարանք, առաքինութիւնք և ոչ անձնդիւրութիւնք։ Ջտեսանիցես զայնոսիկ, որ ի կռիւսն և յըմբշամարտսն մրցիցին, միթէ՞ զճեմելոյ ինչ փոյթ առնիցեն, այլ, զամենայն ինչ թողեալ... միումն եեթ ուշ ունին, կամ յաղթելոյ կամ ի պարտութիւն մատնելոց»[6]։	«Ո՛ն անդր, ի բաց կաց յաշխարհէ..., թօթափեալ ընկեա ի բաց զկեղեւանս ախտալից աշխարհիս։ Մերկեաց իբր զըմբշամարտիկ, օծ իւղովն Քրիստոսի, զի մի կռուեսցին ի քեզ ձեռք ախոյանինն» (164)։

Այդ երկու հեղինակների ընդհանուր ազդեցությամբ է շարադրված նաև Եղիշեի «Յայլակերպութիւն Քրիստոսի» ճառի այն հատվածը, ուր մարդու մեղավոր խորհուրդները նմանեցվում են հոգու աչքը կուրացնող ծխի.

Փիլոն	Ոսկեբերան	Եղիշե
«Մարդկանս կեանք նման են բանդրոյ ծխելոյ՝ հուր	«Նոյնպէս և մտացն ակն եթէ յեղտիւրս հոգևոր բա-	«Մարդոյ խորհուրդք իբրև զծուխ անցաւոր են. և

4 Ոսկեբերան—Եղիշե կապի մասին տե՛ս Թ. Լևոնյան. Եղիշե և Ոսկեբերան.—«Բազմավեպ», 1917, էջ 107—108։ Լ. Խաչիկյան. Նշվ. աշխ., էջ 103—107։

5 Յովհաննու Ոսկեբերանի... յաւետարանագիրն Մատթէոս, Գիրք Երկրորդ. Վենետիկ, 1826, էջ 513։

6 Յովհաննու Ոսկեբերանի... Մեկնութիւն թղթոցն Պաւղոսի. Ա, Վենետիկ, 1862, էջ 70։

պարզ և վճիտ, մաքուր լոյս ոչ ունելով, բայց ծուխ բազմապատիկ ի ձեռն ծըխելոյ և շրտուցելոյ բոցոյ, որ շամանդաղ և խաւար գործէ, և զաչաց շրտումն ու զմարմնոյ, այլ՝ զոգւոյ, որ մաքրապէս իրացս արգելեալ լինին տեսանել մինչև փրկիչն Աստուած զերկնալինսն ծագեսցէ լամբարս...» (187)։

նիցն հարակիցի, սուրբ յստակ և քաջատես լինի, իսկ եթէ ընդ ծուխ ինչ աշխարհի իրացս գայցէ, բըտաբեր արտօսրալից լինիցի... Զանզի ծխոյ իսկ նման են ամենայն իրք մարդկորենք...»7։

ծուխ անդր սաստեաց և հետաեռոյս արար զնա ի նոր մարդոյս, զի իցէ ինքնածաւ լոյս առանց ապականացու խորհրդոյ...» (214)։

Ցույց տալու համար հոգու և մարմնի հարաբերակցությունը, Եղիշեն «Վասն հոգւոյ մարդկան» երկում այդ երկուսը նմանեցնում է քնարին և քնարահարին. ինչպես քնարն է ենթարկվում քնարահարին, այնպես էլ մարմինն է ենթարկվում հոգուն։ Այս պատկերը, թվում է, բերված է Ոսկեբերանի Եսայու մեկնությունից.

Ոսկեբերան

«Զի՞նչ օգուտ իցէ ի քնարէն, եթէ քնարահարն եղծանիցի...»8։

Եղիշե

«Գովի քնար, այլ ի ձեռն քնարահարին... Ապա թէ ոչ իցէ քնարն, չերևի քնարահարն...» (370)։

Ինչպես երևում է, Եղիշեն «Ի չարչարանս Քրիստոսի» երկը շարադրելիս իր ձեռքի տակ է ունեցել Հովհան Ոսկեբերանի «Ի խաչելութիւն Տեառն» ճառը ու Եփրեմ Ասորու Համաբարբառ Ավետարանի մեկնությունը։ Այս մասին է վկայում ոչ միայն համապատասխան պատկերներում առկա նմանությունը, այլև՝ մեկ այլ պարագա։ Քրիստոսի հետ խաչված ավազակներից մեկին բնութագրելիս Եղիշեն գրում է, թե դրախտի «զցանկն ոչ ոք կարաց արդարոցն խրամատել. ո՛չ Աբրահամ, ո՛չ Սահակ, ո՛չ Յակովբ, ո՛չ Մովսէս ինքն օրինօքն և ոչ մարգարէքն քարոզութեամբքն... ո՛չ հրեշտակք, ո՛չ հրեշտակապետք... զդուռն դրախտին բանալ ոչ կարացին, բայց միայն աւազակս այս։ Յիրաւի ուրեմն ասացաւ, թէ աւազակն եբաց զդուռն դրախտին» (272)։ Ընդգծված նախադասությունը որոշակի ակնարկ է Ոսկեբերանի ու Եփրեմի երկերի համապատասխան հատվածների. «Խոստովան լինէր և զդրախտն բանայր, խոստովանեաց և հրաման առ համարձակութեան, յաւազակութենէ յարքայութիւնն խնդրէր»9 (Ոսկեբերան), «Արդ, ի ձեռն աւազակին բացաւ դրախտն, ոչ ի ձեռն միոյ ուրուք արդարոց անտի»10 (Եփրեմ)։

Եղիշեն օգտագործել է նաև Աստվածաշնչի պարականոն գրքերը։ Ելնելով «Ի քարոզութիւն առաքելոց» ճառի «որպէս յայտնագոյնս ցուցանէ մեզ պատմութիւնն Անդրեայ, որ ապրեցաւ ի ձեռն Մատթէոսի Աւետարանչի» (346) բառերից՝ կարելի է հետևցնել, որ հեղինակը օգտվել է Անդրեաս առաքյալի գործունեության մասին վիպող «Յաղագս Անդրէի առաքելոյ եւ նորին սքանչելեացն, զոր Տէր արար ի ձեռն նորա եւ Մատթէի ի մարդակերաց աշխարհն», «Պատմութիւն սուրբ առաքելոցն Անդրէի եւ Մատթէոսի, թէ

7 Ոսկեբերան. Մեկնութիւն Մատթէի, էջ 26—27։

8 ՆԲՀ, Բ, էջ 1008։

9 Յովհաննու Ոսկեբերանի ճառք. Վենետիկ, 1861, էջ 208։

10 Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք. Բ, Վենետիկ, 1836, էջ 223։

որպէս գնացին յաշխարհն մարդակերացն»[11] պարականոն զրույցից։ Սակայն, ի տարբերություն առկա զրույցի, ուր պատմվում է, թե Անդրեաս առաքյալն է փրկում Մատթէոս Ավետարանչին մարդաեբներից, Եղիշեի ձեռքին, ըստ երևույթին, եղել է զրույցի մեջ այլ տարբերակ, ըստ որի, ընդհակառակն, Անդրեաս առաքյալն էր, «որ ապրեցաւ ի ձեռն Մատթէոսի Աւետարանչի»։ Պարականոն գրքերից օգտվելու նման փաստերը վկայում են, որ դրանք V դարում արդեն թարգմանված լինելով, տարածված ընթերցանության գրքերից էին։

ИЗ ИСТОЧНИКОВ ГОМИМИЛИЙ ЕГИШЕ

А. О. КЕСЕЯН

Резюме

В изучении литературного наследия книжника V века Егише важное место занимают источниковедческие исследования. В статье сделана попытка выявить новые аналогии и заимствования из сочинений Филона Александрийского, Иоанна Златоуста, Ефрема Сирина, апокрифических апостольских повествований.

11 Տե՛ս Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Անկանոն գիրք առաքելականք, հրատ. Հ. Ք. Զոհրեան. Վենետիկ, 1904, էջ 124—145, 168—173։